

նաստեղծութեան մը մէջ . բայց արտաքոյ արտայայտութեան՝ գեղեցկութիւն չկայ . անշուշտ որովհետեւ մտածումը արտայայտութեան մէջ կը դառնայ կատարելապէս իրագործուած . Աւրեմն Գեղեցկութիւնը , ճշգրտօրէն խօսելով , կը կայանայ այն բանին մէջ որ զգայարանքներով իմանալի է , թէս ինչ որ այդպէս ըմբռնուած է , շատ աւելի անդին կրնայ անցնիլ քան լոկ զգայականը .

Բարութիւնը (նկարուցքի) կատարեալ համակարգութիւնն է անձնաւորութեան բուլոր տարերեռուն՝ միակ ամբողջի մը մէջ , և այդ ամբողջին՝ իր շրջապատին հետ , մասնաւորաբար իր աննական շրջապատին հետ : Ասիկա աւ երկարօրէն քննած եմ այլուր , և ատոր պէտք է անզրադառնամ աւելի վիճի զւուխներու մէջ :

Իր հաստատումը թէ ինչով ծշմարտութիւնը , Գեղեցկութիւնը և Բարութիւնը կը ներկայանան իրեւ արարքին նպաստկներ՝ բաւական է ցոյց տալ թէֆիրենց Արժեքը՝ թէ յարակից է և թէ բացարձակ է : Յարակից է՝ անով որ անոնք իրենք իրենց մէջ լիուլի բարի են , բացարձակ է՝ անով որ կախում չունի ունէ բազդառութենք , Ընկերային է նաև , որդուեալ անոնց ստացումը մէկու մը կողմէ հնուու արգիլելէ , ընդհակառակը մեծապէս ալ կ'օգնէ ուրիշներու կողմէ ալ անոնց ստացման : Անձ հոս լոկ ընդունաբան մըն է , իր կողմէ հոս այս մասին ունէ յաւակնութիւն , վստահորէն պիտի արգիլէ ամբողջական ըմբռնում մը ծշմարտութեան , Գեղեցկութեան կամ Բարութեան : Բայց այս ըսկէ չէ որ ես-ը հոս միայն կրաւորական է : Ընդհակառակը , ուժգնորէն գործօն է , բայց իր գործունէութիւնը , զիխաւորաբար ընկալուն է , առնուազն իր ծշմարտութեան և Գեղեցկութեան ըմբռնամ մէջ , և իր ուշազրութիւնը կեցրուացած է բոլորվին առարկային բարք , երբէք ինք իր վրայ ։ Բայց գնացումը ամբո՞ղջ անձննն է , ամբողջ և կատարեալ :

Այսպէս կը հասնիք գործնականապէս և տեսականօրէն մեծ կարեռութիւն ունեցող սկզբունքի մը . անձը կարող է ա'յնքան աւելի ամբողջական գոհացման մը , որքան աւելի ինքընքը իր ուշազրութեան դաշտէն գուրը կը թողու : Արժեքը գոյութիւն ունի ենթականերուն համար , բայց ենթական զայն կը գտնէ միայն երբ կատարելապէս գրաւուած է առարկայով :

Թրգմ. Ի. Ա. Պ.

W. TEMPLE

(Նարուանիլ)

## ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

### ՀՐՈՎԱՐԴԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ

Հոսկայեցիք առաջին անգամ Փոքր-Ասիա սոք կոնսցին Ն . Ք . 190 թուին , երբ Մագնեսիոյ ճակատամարտում քայլակելով Սելեւկեան պետութիւնը՝ ամրող Փոքր-Ասիայ մինչև Տաւրոսի յիսները տիրեցին : Հայաստանի երկու կուսականները՝ Արտաշէս և Զարեհ Ժամանակից Սելեւկեանց լուծը թօթափելու և բանակցութեան մտնելով Հոսկմի հետ՝ ստացան Սելեւկոյոտի համաձայնութիւնը և Հայաստանը անկախ յայտաբարեցին (189) . Այս է այն առաջին ակտը՝ որով հայերը հոսկայեցց հետ յարաբերութեան են մտնում :

Յարաբերութիւնները շատ աւելի զօրացան , երբ Տիգրան և Միհրանը կ'թիւնով հայ-պօնոսական կայսրութիւնը՝ պատերազմ սկսան հոսկայեցց դէմ : Միհրանը տառ նուանեց Փոքր-Ասիան , Մագնետոնիան և Յունաստանը և այս բոլոր երկրների մէջ գտնուած հոսկայեցիններին կամ կոտրեց եւ կամ վտարեց : Միլլա եւ Լուկուլլոս յաղթեցին Սիրուատին , որից յետոյ Հոսկայեցիք մտան Հայաստան եւ մինչեւ Արտաշատ յառաջացան : Տիգրան հաշտութիւն առաջարկեց Պոմպէոսին և իր տիրած երկրներից հրաժարուելով՝ Հայաստանը գարձեց Հոսկմի գաշնակից և բարեկամ պետութիւն , որի թագաւորները գահ պիտի բարձրանային Հոսկմի հաւանութեամբ (66) : Այնուհետեւ Հոսկայեցիք պատրաստուեցին նուաճել պարթեւների պետութիւնը : Այս պատերազմի մէջ հայերը իրեւ դաշնակից՝ պիտի միանային Հոսկայեցց , կոռեւլու համար պարթեւների դէմ , բայց նրանք աւելի լաւ համարեցին հաշտ ապրիւ մօտակայ թշնամու հետ , քան միանալ հեռաւոր բարեկամին : Այս պատ-

(\*) Վեցուած մեծանուն նեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գրետեն (Ժ. Խ. Ժ. Պատմ.) :

ճառաւ երբեմն չէզոք, երբեմն էլ յայտնապէս բարեկամ էին գտնում պարթեւներին։ Հոռվմէական բանակն էլ ստիպուած էր շարունակ նստել Հայաստանում՝ մերթ իրբ հսկող, մերթ իրբ թշնամի, չթողնեւու համար՝ որ Հայաստանը մտնէ պարթեւների հովանարութեան տակ։ Հայերը միանալով պարթեների հետ, շատ անդամ ապստամբում են Հոռվմայեցոց դէմ, դուռ են վանում հոռվմէական բանակը, բայց մի ժամանակ յետոյ, աւելի մեծ ուժի առաջ ստիպում են խօնարիկ։ Հայ թագաւորները գնում են Հոռմ, կայսեր ձեռքից ընդունելու իրենց թագը, իրենց այս կամ այն ազգական իրբեկ պատանդ մնում է Հոռվմում։ Հայաստանը հոռվմայեցոց հովանաւորութեան տակ մերթ վասար թագաւորութիւն է, մերթ դաշնակից անկախ պետութիւն, մերթ սոսկ հոռվմէական նահանգ։ Բայց այս բոլոր ձերերի տակ էլ հայ-հոռվմէական յարաբերութիւնները շատ կենցանի են, մինչև 329 թիւը, երբ հիմունելով Պուլսը, վերանում է Արեւելքից հոռվմէական կայսրութիւնը և նրա տեղ բարձրանում է Յունական կամ Արեւելեան կայսրութիւնը, յոյն լեզով և յօնական քրիստոնէական քաղաքակրթութեամբ։

Հայ-հոռվմէական յարաբերութիւնները շարունակի են ուրեմն ամբողջ 400 տարի։

Այս 400 տարուայ ընթացքում հոռվմէական քաղաքակրթութիւնը առանց ազգեցութեան չէր կարող մնալ ի հարկէ հայ կեանքի և հետեարար յայ լեզուի վրայ, մանաւանդ որ Հայաստանի մէջ զրիթէ շարունակ նստած էր լինում հոռվմէական զօրքը։ Հոռվմէական յիշատակը երեսում է այն զանազան արձանագրութիւններից՝ որ թողել են հոռվմայեցիք Հայաստանի մէջ, նոյն իսկ Հայաստանի կենտրոն Վաղարշապատում, որ իրենք հիմնեցին Արտաշատը հիմնայտակ կործ անելուց յետոյ։ Մինչեւ այսօր մոււմ են այդ արձանագրութիւնները իշմածնում՝ յ. ք. Բ. Դարից։ Բանակը՝ ո՞ր երկրում էլ որ նստի, անշուշտ որ և է ազգեցութիւն կ'ունենայ նրա վրայ։ Այս կողմից նշանաւոր է եղել հոռվմէական բանակը՝ որ լատիններէնի ազգեցութիւնը՝ իրբեկ վարչական ու զինսորական լեզուի, տարածել է ուր ոք գնացել է, աւելի կամ պակաս չափով։ Հոռվմէական բանակի պատ-

ճառով էր՝ որ Սպանիայում, Պորթուգալիայում, Ֆրանսիայում, Բելգիայում տեղի են տուել տեղական ազգային լեզուները և մտել է ամբողջապէս լատիններէնը, որի ժառանգներն են այսօր սպաններէնը, պորտուգալերէնը, ֆրանսներէնը և այլն։ Յունաբէնն անգամ՝ որ այնպէս իս բրոսու էր օտար փոխառութեանց դէմ, հոռվմէական կայսրութեան ժամանակ վերցրեց լատիններէնից շատ վարչական ու զինսորական բառեր, այսպէս արդէն յունարէն Ակետարանի մէջ գտնում էնք ո՞չ միայն քրատարութեան կամ ձօսքրու, այլ և նոյն իսկ ուռեալձեար, Բայց հոռվմէական լեզուն չկարողացաւ վտարել հայերէնը։

Անշուշտ հայերին չի կարելի համեմատել արևմտեան ազգերի հետ, որովհետեւ, ինչպէս նախորդ ասուածներից երեւաց, նրանց միշտ հակուած էին դէպի արեւելքը և սիրող էին իրանական քաղաքակըրթութեան, ուստի հոռվմէական լեզուի ազգեցութիւնը այնպէս մեծ չէ մեր լեզուի վրայ, այնու ամենայնի նա կայ։ Ասկայն այդ ազգեցութեան հետքերը մեծ չեն մեր աշքին՝ երկու պատճառով։ Նախ՝ որովհետեւ հոռվմէական ազգեցութիւնը եղել է նախ քան գրերի գիւտը, երբ գրականութիւն չի եղել, որպէսզի նրա յիշատակը յաւերժացնէր։ Հոռվմէական ազգեցութեան, բանակի և վարչութեան վերացմաբ՝ ջնջուել են նրանց թողած լեզուական յիշատակները և այսօր ոչինչ չունենք՝ որ յիշեցնեն այդ անցեալը։ Երկրորդ՝ Բիւզանդական կայսրութեան ժամանակ յունարէնը մեծապէս ազդուեց լատիններէնից և ինքը եղաւ միջնորդ նոյն լատինական բառերը տարածեելու իր տիրապետութեանց շրջանում, բայց այս անգամ յունական կերպարանքի տակ։ Լատինական բառերի մի մասը՝ որ հոռվմայեցիններից մասեց էր հայերէնի մէջ, յունական ազգեցութեանը տացաւ նոր կերպարանք, և այլ ևս անձանաչելի գարձաւ, և այսօր մենք, երբ քննում ենք այդ բառերը, գտնում ենք աւելի յունաձեւ քան լատինաձեւ և համարում ենք յունական փոխառութիւն։

Այս բոլորից հետեւում է՝ որ հոռվմէական լեզուի ազգեցութիւնը մինչև մի որոշ աստիճան հայերէնի վրայ թէն անուրանակի է, բայց անյայտ է, որովհետեւ այն բառերը

որ հայերէնը փախ է առել նորվմէտցիներից, ապագայում չնշուած կամ ձեսփոխուած ու յունացած են: Այնու ամենայնիւ կարելի է մատնանշել հետեւեալները՝ իբրև հազուագիւ թացորդներ:

1. Կայուր, (յն. քանօթար) որ հայերէնի մէջ ունենք նաեւ կիսար ձեւով, մինչդեռ իր անուան նուրիւած քաղաքի անունն է Կիսարիա (յն. Կասքրես) յունարէնի ա երկրաբրածի գէմ հայերէնը հանում է միշտ և միշտ այս բառն է որ ունի այլ հետեւաբար հայերէնի հնագոյն փոխառութիւնն է արևմտան աղբերից, հաւանաբար ուղղակի հոռվմայեցներից (Hübschmann, Arm. Gram. էջ 322-23), ճիշտ ինչպէս գերմաներէնի մէջ Kaiser հնագոյն լատինական փոխառութիւն է: Հայերէն բառի Եթ հոլովումը մի աւելի ապացոյց է լատինական փոխառութեան:

2. Արկվ, ժողովրդական լոցին: Ճշգարան է, որի գրական ձեւն է arcula, այս էլ առա Հանուուկ, արկզ, գրամիր զանձանակ, մեռելի գաղաղ, հազուստի զահաւարն» բառի նուազականն է: Իր առանձին ձեւի պատճառով հոռվմէտական արկզը գարձաւ քաղաքակրթական նշանակութիւն ունեցող մի առարկայ և տարածուեց Եւրոպայի բոլոր կողմերը: Իր բուն կամ նուազական ձեւով լատին բառը այսպէսով անցաւ քաղմաթիւ լեզուների, ինչպէս ֆրանսերէն, իտալերէն, անգլերէն, գալիքէն, քրուներէն, հին իրլանտերէն, գոթացերէն, հին իսլանդերէն, գերմաներէն, հայուսերէն, շվեյցերէն, հին սլավերէն, չեխերէն, բունեմերէն, լազարներէն, ֆիններէն և այլն: Լատին ժողովրդականն ձեւից փոխառեալ է նաեւ յն ձորձ և կարելի է մատածել՝ որ հայերէն ձեւը սրա միջնորդութեամբ յառաջացած լինի. Բայց ըստ որում բառը շատ կրն է, մասնաւանդ որ պատկանում է տանյին իրերի կարգին, իսկ յունական փոխառութիւնները սովորաբար կրում են կրօնական կամ գիտական բնոյթ, ուստի աւելի հաւանական է զնիւ ուղղակի հոռվմայեցներից անցած հայերէնի:

3. Ակուել զմետազեայ ափսէ կամ մատուցարան», որ այս ձեռվ շատ քիչ է գործածուած և աւելի յիշոյ զարձած է սկզբանի, սկսելու լատինական scutella «պնակ, ափսէ ո բառն է, որ լու սկու բառի նուազա-

կանն է: Նախորդին նման այս էլ տարածուած է զանազան լեզուների մէջ, այսպէս ֆրանսերէն, իտալերէն, հին գերմաներէն, լետտերէն, հին իսլանդերէն, սերբերէն, յունարէն և այլն: Այստեղ էլ կարելի է կարծել որ բառը յունարէն օսունձած ձեւի միջնորդութեամբ անցած լինի, բայց աւելի հաւանական է ուղղակի փոխառութիւնը:

4. Սիտղ աջրի աման կամ գոյլ», լուսիւլա «գոյլ» բառն է, որ տարածուած է շատ լեզուների մէջ, ինչպէս յունարէն, ասորերէն, արարերէն, պարսկերէն, թուրքերէն, ուուչերէն և այլն Մեր բառը կարող է լինել լատիներէնից ուղղակի և կամ յուն. ձեւի միջնորդութեամբ եւ որովհետեւ աւանդուած է ուշ ժամանակ, ուստի վերջինը աւելի հաւանական է:

5. Կառե. Հոռվմայեցոց carrus բառն է, որով հասկացում էր մի տեսակ քառանիւ կառք: Այս բառը զալերէնից անցել էր լատիներէնի և յետոյ փոխառութեամբ տարածուեց շատ լեզուների մէջ. ինչպէս՝ ֆրանսերէն, ուումիներէն, գերմաներէն, չվեյցերէն, ֆիններէն, ասորերէն և այլն: Այս բառը յունարէնում չկայ, ուստի չենք կարող մտածել յունարէնի միջնորդութեան մասին: Կայ ասորերէնում, բայց ունի բոլորովին տարբեր ձև (գառչահ), որ եթէ հայերէնի անցած լինէր, պիտի տար կարուխայ կամ առ առաւելն կառուխ ձեւը: Ուստի պարզ է որ այս բառը ուղղակի հոռվմայեցի զինուորների լեզուից անցած պէտք է լինի հայերէնի:

6. Կենջակ գողնոց, անձեռոց կամ սրբիչ», հայերէնի մէջ քիչ անգամ գործ ածուած բառ է, առաջին անգամ գտնում ենք յն. Ժ. 4, 5, որ յն բնագրում նոյնպէս նետուած է: Ցան ունի: Ցան բառը փոխառեալ է լու լունեում բառից, որ ծագում է լուսում գուշը բառից: Հայերէնը շատ կին փոխառութիւն է, որի ապացոյցներն են է ձայնի փոխարէն գրուած ջ և բառագերջի ակ մասնիկը: Բայց այնու ամենայնիւ կարող չենք հաստատապէս ասել որ հայ ձեւը ուղղակի լատիներէնից առնուած լինի, քանի որ ունինք յունարէն ձեւը՝ գործածուած լետտարանի համապատասխան հատուածում, մանաւանդ որ թէ հայը և թէ յայնը ունեն և ձայնաւորը, մինչդեռ լատինը ունի:

Վերայիշեալ բառերը կրում են այնապիսի կերպարանք, որ կարելի չէ ասել թէ վիտունների միջոցով կատարուած փոխառութիւնները են, ինչպէս պիտի լինէին իսկական յունական փոխառութիւնները, այլ բոլորովին ժողովրդական ձևեր են, բերնէ բերան անցած, իրեւ արզիւնք հոսովմայեցի մարզոց եւ հայ անհատների յարաբերութեանց:

Հատիներէնի ազգեցութիւնը հայերէնի վրայ գագարելուց յետոյ 329 թուին, վերսկում է երկրորդ անգամ Կրիլկեան թագաւորութեան ժամանակ ժԴ. և ժԴ. գարերին, Անդիթոռական քարոզիւնների ձեռքով, երկու ազգեցութիւնները կրում են բոլորովին տարրեր բնոյթ, ուստի մենք էլ բաժանում ենք երկուուր իրարից և վերջ տալով այստեղ այս գլխին, երկրորդ շըրջանի մասին կը խօսենք առանձին գլխով՝ ԱՌՆԻԹՈՌԱԿԱՆ կամ լատինաբան հայերէն վերնագրի տակ:

## ԱՍՈՐԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ

Անհաժեշտ է նախ զանազանել իրարից Ասորեստանցներին ու Ասորիները: Առաջինները բնակում էին Ասորեստանում, Հայաստանից ու Միջագետքից հարաւ գրտնըւած այդ ընդարձակ երկում, որ հնագոյն ժամանակները դարձաւ մեծ աշխարհակալ պետութիւն եւ որի մայրաքաղաքն էր նինուէ: Ասորիները բնակում էին Ասորիքում, Միջերկրական ծովի արեւելեան կողմը, Պաղեստինից, հիւսիս գտնուած այդ երկում, որ տարածւում էր մինչեւ Եփրատ: Այս երկիրը նշանաւոր եղաւ Սելեւկեանց ժամանակ, որոնք տիրեցին Ասորիքին եւ նրա ըրջակայ երկիրներին մինչւն. Ք. 64 թիւը, երբ Տիգրան Մեծի ձեռքով Սելեւկեանց պետութիւնը կործանեցաւ և Ասորիքը նախ հայոց, քետոյ էլ Հռովմայեցաց իշխանութեան տակ մտաւ: Այս երկիրը թուլութեան ժամանակ կազմուեց Օսրէնի թագաւորութիւնը (Ե. Ք. 136), որի մայրաքաղաքն եղաւ Ուռիա կամ Եղեսիա: Այս

երկրի բնակչութիւնը բազկացած էր մեծաւ մասամբ ասորիներից և հայերից: Հռովման յիցիք 217 թուին վերջ տուին այս թագաւորութեան և Ասորիքի պէս իրենց իշխանութեան տակ առին: Հռովմայեցիներից յետոյ եկան յոյներն են ինչպէս Ասորիքի, այնպէս և հայկին Օսրէնի տէր դարձան: Քրիստոնէութեան ժամանակ Ասորիքի ասորիները խմբովին ընդունելով նհսուորականութիւնը՝ ենթարկուեցին յունաց հաւածանքներին, այնպէս որ ստիպուեցան փախչել իրենց մայր հայրենիքից և ապաւինելով Պարսից պետութեան՝ նրանց պաշտպանութիւնը խնդրեցին: Պարսիկները լայն բացին իրենց գռները նրանց առջև ի հետուկս յունաց: Այդ ժամանակից (435) Ասորիները սկսեցին գաղթել եւ տարածուիլ Միջագետք, Պարսկաստան, Արարիա և մինչեւ Հնդկաստան ու Ջնաստան յառաջացան, ուր հիմնեցին քրիստոնէական եկեղեցի: 634 թուին Արաբները նուաճեցին Ասորիքը, ուր մնացած սակաւաթիւ ասորիները արաբական լեզուն և մահմեդական կրօնն ընդունելով՝ ամբողջապէս արարացան, այնպէս որ այսօր Ասորիքում ասորի ժողովաւրդ չկայ: ԺԴ. գարուն է և նկթամուր կրծքանեց Արեւելեան Ասոր նհսուորական եկեղեցիները, ասորիների մնացորդները քաշուեցան յետ եւ պատասխանեցան Քիւրդիստանի լեռները: Այս կարգին է պատկանում Զօւլամերկի նհսուորական քաջապահիների մեծ գաղութը որ վերջին տեսզահանութեան ժամանակ վտարուելով տաճիկներից, մեծամեծ զոհեր տալուց յետոյ, նախ Պարսկաստան, այժմ էլ Մուսուլ հաստատուեց: Այսպէսով նախիկն Ասորեստանը, որ ոչ մի կապ չունէր ասորիների հետ, այսօր ասորիների նոր հայրենիքը դարձաւ:

Հայոց յարաբերութիւնը ասորիների հետ պկում է այն ժամանակից, երբ հայերը զեր Փոքր-Հայքում էին, բայց մանաւանդ երբ Փոքր-Հայքից յառաջացան գէպի Մհծ Հայք: Ն. Ք. 190 թուին՝ երբ Զարիքադրէս հիմեց անկախ հայկական թագաւորութիւն, իր գրաւած նահանգների (Սոփք, Հանձիթ, Աղձնիք, Տօրիք, Սասուն) ժողովրդեան ստուար մասը Ասորի կամ Արամայեցի էր, որ քիչ քիչ հայախօս գառնալով՝ ձուլուեց հայ տարրի հետ: Ն. Ք. 61 թուին, երբ Տիգրան Մեծը նուաճեց Ասորիքը, անշուշտ

իր սովորութեան համաձայն ասորիների զանազան խմբեր բերաւ Հայաստան բնակեցրեց։ Օսորէնի թագաւորութեան մէջ հայոց և ասորիների յարաբերութիւնը այնպէս սերտ էր, որ Արքարները անուանում էին իրենց «Թագաւոր Ասորոց և Հայոց»։ Այդ թագաւորուները ծագմամբ նոյն իսկ պատկանում էին հայ-աշշակունեան տոհմին։ Երբ սկսեց քրիստոնէութիւնը, առաջին ժողովուրգը՝ որ ընդունեց այս կրօնը, ասորիներն եղան։ Առաջին քրիստոնեայ թագաւորն եղաւ Եգեսիոյ ասորի Արքար թ. թագաւորը, որ ընդունեց քրիստոնէութիւնը Գ. գարի սկզբին։ Եցեսիոյ շրջանից Մըծմինի վրայով անցան Հայաստան և նրա հարաւային կողմերում տարածեցին քրիստոնէութիւնը։ Գարի սկզբը իրեք քրիստոնէութեան քարոզիչ Հայաստանում յիշլում է Եգեսիոյ մեծ բանաստեղծ եւ պատմաբան Բարդածանը։ Նոյն դարի կէսին արդէն Հայաստանի մէջ կար հայ եպիսկոպոս, որ անշուշտ կապ ուներ Եգեսիոյ ասորական թեմի հետ։

Երբ քրիստոնէութիւնը ամուր կերպով հաստատուեց, Եփեսոսում բացուեց ասորական մի մեծ դպրոց, որ կարող ենք արդի բառով կոչել և Աստուածաբանական համալսարան։ Զանազան երկիրներից ուսուանողները զնում էին այդ նշանաւոր դպրոցում կրօնական սոսում ստանալու։ Գրիգոր Լուսաւորչը Հայաստանում պաշտօնապէս քրիստոնէութիւնը մտցնելուց յետոյ՝ նորակառոյց Եկեղեցիների համար, ինչպէս յոյն, նոյնպէս և շտ ասորի կրօնաւորներ բիրել տուաւ, և յանարէնի հետ ասորիքէն էլ եղաւ հայ Եկեղեցիների պաշտօնունքի լեզուն։ Ներսու Մեծը նոյնիսկ յոյն և ասորի դպրոցներ բացաւ Հայաստանում։ Մի ժամանակ յունաբէն ու ասորիներն մրցակից էին հայոց երկրում։ Պարսիկները յոյն կուլտուրայի տարածման մէջ քաղաքական վաս զգալով՝ արդիկեցին յունաբէնի ուսումը իրենց երկիներում, ինչպէս և Հայաստանում և ընդհակառակը քաջալերեցին ասորիների ուսումը։ Այսպէսով հայ Եկեղեցն ապահովութեան լեզուն ասորի բէնը գարձաւ գարպեցին նկարագրում է այն անտանելի գրութիւնը՝ որ ստեղծուել էր հայ ժողովուրդի համար, որ գնում էր Եկեղեցի՝ իրեկ արձան լսելու այն լեզուն,

որից ոչինչ չէր հասկանում։ Նա նկարագրում է միսս կողմից այն անտանելի զբժուարութիւնները որ կրում էին հայ ուսանողները, հեռաւոր ճամբորդութեան մէջ, Եգեսիա զնալու համար և ասորական զբժուարին լեզուն սովորելին։ «Քանզի հոգացաւ յարաժամ տրամէր երանելի ալին Մաշտոց, տեսանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս՝ մանկանցն Հայաստան աշխարհու, որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ գեղերմամբք մաչէին զաւուրս իրեանց ի գպրոց ասորի գիտութեան Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք զրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայ և յեկեղեցին հայաստան ժողովրդոցոց, յորմէ ոչինչ էին կարող լսել և օգտել ժողովուգործքն այսպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահնակին յանըրութենէ լեզւին ասորուոյն (Փարու. Էջ 13)։

Ս. Մեսրոպ էլ հայերէն գրերի գիւտի համար իր փորձերը Միջազգետքի ասորի գիտունների շըջանից սկսեց, պրատեց Եղեսիոյ ճոխ մատենազարանը և հայերէն զիրն էլ այնտեղ յօրինեց։ Այնտեղ թարգմանեց առաջին հայերէն գիրքը (գիրք Առակաց Սողամոնի)՝ ասորական օրինակի վրայից, որին հետևեց ամրողջ Ս. Գիրքը։ Ոսկեգարի առաջին գործերի մի ստուար մասը ասորիներից թարգմանուեցաւ։ Այսպէս են բացի Ս. Գրքից՝ Եփեսիմի երկերը (4 հատոր), Ս. Պահնատիփի նամակները, Եւսեբիոսի եկեղեցական պատմութիւնը, Լաբուրնա Եկեղեցացոց թուղթ Արքարու, Ափրատ կամ Զօն Մծբնացի, Արեւելեան Վկարք, վարդապետութիւն Առաքելոց և ուրիշներ։ Ասորական ազգեցւութիւնը հայոց վրայ մատանշչիւնու համար յիշենք բացի զանազան քարոզիչներից՝ մասնաւորապէս Դանիէլ քորեպիսկոպոսը՝ որ հայոց կաթուղիկոսութեան աթոռը կանչուեց, և Բրդէն, շոյ ու Շմուել ասորիները՝ որոնք 429-437- գարեցին հայոց կաթողիկոսական աթոռը։ Այս ժամանակից յետոյ ասորիների ազգեցւութիւնը հայոց վրայ վերանում է։ Հայ մատենագրութեան և հայ գրական լեզուի ծաւալումը ի սպառ վարում է ասորիների գործածութիւնը և ասորիների ուսումը։ Ասորիները հետպէսէ թուշանում տկարա-

նում են նաև իրենց երկրում, որի պատճառներից մէկն է զանագան դաւանութիւններն են լինում, որոնք պատառ պատառ ին անօւմ ասորի ժողովրդին։ Հնդկակառակը, 551 թուին, երբ հայերը զատապարտելով քաղկեդանական վարդապետութիւնը՝ կազմում են ինքնուրոյն ազատ եկեղեցի, ուղղափառ ասորիները վնտում են հայ եկեղեցու պաշտպանութիւնը և հովանաւորութիւնը։

Հայ և ասորի ժողովուրդների յարաբերութիւնը այս գիճակի տակ, այսինքն երկուսն էլ իրար շատ բարեկամ և նոյն իսկ կրօնակից, հայերն աւելի ազգեցիկ, իսկ ասորիները նրանց հովանաւորութիւն տակ, շարունակում են այսուհետեւ երկար զարեր և մինչև այսօր էլ նոյն է։ Տեղ տեղ հայոց ազգեցութիւնը այնքան մեծ է եղել, որ ասորիները նոյն իսկ կորցրել են իրենց լեզուն և խօսում են հայերէն։ այսպէս ներքերդի մէջ գտնուած 900 շունչ ասորիները հայախօս են եղել և ասորիներ լեզուն իմացող կամ խօսող ասորի հազուագիւտ էր։ Նրանք ու կը խօսին հայերէն, ինչպէս հայ մը, ասրբերութիւնամբ միան որ հարցականք եւ ձայնարկութիւններ սովորականէն քիչ մը երկար ու անտեղի թափով կ'արտաքրենո (Յ. Յարուբիշան, Փարերդի Ասորիներ, Արևելյ, 1888, Ցունիս 2):

Ասորական ազգեցութիւնը հայոց գրայ կարող ենք ուրեմն բաժանել չորս շրջանի։

1. Նախնական ցըան, երբ ասորիները կազմում են Հայաստանի հարաւային նորանուած գաւառների ազգաքանակութեան մեծամասնութիւնը և կամաց կամաց ձուլւում են (Ն. ք. Ա. կար)։

2. Քիսունիկանան հարողուրեան ցըան, երբ հայ եկեղեցու պաշտօնեաներն ու ծիսական լեզուն ասորիէնն է (Գ.-Դ. գար)։

3. Մատենագրական ցըան, երբ Եղեասիոյ գրողը հիւրընկալում է հայ ուսանողներին և ասորիկան եկեղեցական գրականութեան կարենո գործերը հայերէնի են թարգմանւում (Դ.-Ե. գար)։

4. Անկաման ցըան, երբ ասորիները իրենց մեծութիւնն ու ազգեցութիւնը կորցրած, պարում են հայոց հետ ազգային ու կրօնական մօտիկ բարեկամական յարաբերութեան մէջ, վնտուելով ու վայելելով մեր պաշտպանութիւնը։

Այս չորս շրջանները ունեցել են իրենց տարրեր ազգեցութիւնը հայերէն լեզուի վրայ։

Առաջին շրջանում ասորիները հայանալին՝ Հայաստանի միւս նախարարիկների նման իրենց հետ բիրին և հայերէնի մէջ մուծեցին անշուշտ զանազան բառեր, որոնք նախ Հայաստանի հարաւային շրջանում իրեն գաւառական բառեր գոյութիւն ունին, յետոյ աւելի զիր բարածուելով ընդհանուր հայերէն զարձան։ Այս բառերը միւս շրջանների փոխառութիւններից այն տարրերութիւնն ունին, որ զուտ ժողովը գտական բառեր են և պատկանում են առաջնին ու սովորական կեանքին։ ինչպէս ամիսան, օդայ, երեալ, ձեր, մախար, օմամփուր, օրպայ, եալյն։

Երկրորդ շրջանում փոխառեալ բառերը պատկանում են եկեղեցական լեզուին և ասորի կրօնասորների միջոցով մտել են լեզուի մէջ։ ինչպէս աբեղայ, բահանայ, սատանայ, ծուն, հուսիքայ, հուրմ, հարող և այլն։

Երրորդ շրջանին փոխառութիւնները կրում են զուտ գիտական բնոյթ, վերաբերում են գարողական կեանքին և շատ անգամ՝ ուսումնականները ձեռքով կատարուած հասարակ տառագործութիւններ են՝ ասորական բնագիրներից թարգմանութիւններ անելու ժամանակ։ ինչպէս աբուրայ, զարգ, քարգմանել, բոն եւ բօն, հեզզ, հեզենայ, մազալար, մծզնեալ, մղավառէ, յար, նաբալել, սաբա (ծեր), սովիր և այլն։

Չորրորդ շրջանին փոխառութիւնները կատարուել են միայն այն գաւառներում, ուր հայ և ասորի ժողովուրդները կենակցում էին իրար հետ։ այսպէս Հայաստանի հարաւային գաւառներում, Միջազգետքի հիւսիսային կողմերում, Կիլիկիոյ արևելեան կողմերը, Եփրատացցան սահմաններում և աւելի ուշ Աւրմիոյ լճի արևմտաեան շըրջանում (Սալմասա և Աւրմիա), ուր հայերը և ասորիները մինչև այս րոպէս էլ բարի հարեւաններ են, շատ սնգամ ազգակցական ու խնամիսական կապերով կապուած իրար հետ։ Այս շրջանի փոխառութիւններն էլ կրում են ժողովրդական բնոյթ և պատկանում են հասարակ ու սովորական կեանքին։ նրանցից ոմանք մտել են յետին դարերի հայ գրական մասցրդների մէջ, միւսները

գործածական են միայն արդի հայ բարբառա-  
ներում և գրական լեզուի մէջ չեն մտել: Այսպէս են օրինակ մնինայ, մաւար (սղոց),  
առլել, Մակոր:

Չորս շրջանների փոխառութեանց ընդ-  
հանուր գումարն է 177 բառ, որ կարելի է  
ըստ տեսակի դասաւորի համար ճեռով:

1. Բնութեան եւ նրա զօրութեանց մա-  
սին. — Մղավուք (կենդամնակերպ), մահրա  
(լուսին), սիիք:

2. Կրօնական բառեր. — Արելայի, ա-  
բիոն, աղեն (եղեմ), ատեսարան, բոււտ, իբ-  
րամեն, խարամանի, ծոմ, մծղնեայ, նած-  
րացի, ուռեփայ, սատանայ, սերովիք, քա-  
հանեայ, քաղցեայ, քառոյ, քերովիք, բուրմ:

3. Մարդ եւ մարմին. — Մասկ, մոր,  
տեֆ:

4. Հիւանդութիւններ. — Մաւարա (քո-  
խախ):

5. Կենդաններ. — Ամառու, առնակ,  
առնես, խարագուլ, խարամանի, խլուրդ,  
խղունցն, կատու, կախաւ, կուղը, մնինայ,  
յամոյր, շերամ, պախտէ, պապկայ, ջայլամն,  
քօչ:

6. Ընտանիք եւ ընկերութիւն. — Մա-  
կար, տղայ:

7. Երկարագործական. — ա) Տուններ. —  
Զապայ, ծօրոր, նաղորան, ուռմրայ, ուռ-  
մայ, սակամունխայ, փեղենայ:

բ) Տունի մասեր. — Տերեւ, կեղեւ:

տ) Գործիններ. — Մանգազ:

շ) Երկարութուրին. — Գաղփօ:

8. Խաշնարածութիւն եւ զիւղատնտե-  
սութիւն. — Զիր սար. — Մշրակ:

9. Գիտութիւն եւ արուեստ. — ա) Ար-  
հեսի վերաբերեալ. — Մաւար, բուրայ:

բ) Ուսում. — Արուբայ, քարգմանել,  
հաշիւ, հեգել, հեգնայ, հութորայ, մազա-  
ղար, սուփեր, յար, փիլսոփայ:

տ) Երածշուրիւն եւ քարտ. — Թատր,  
ծննդզայ, մերիօս, ռեփարայ, հնար:

10. Գոյներ. — Հայու:

11. Վաճառականութիւն եւ դրամական  
գործարք. — Թանգար (վաճառական), հա-  
ռել, ուռիայ, ոբուեայ:

12. Հենութիւն եւ շէնքի մասեր. —  
Ազուզայ, առլել, բերբիլա, բուրգն, խա-  
նուր, կապելայ, մաշին, մառան ՞, փալտայ:

13. Հագուստ եւ զարդ. — Ամլան, ըե-  
նեզ, զղար, գուլպայ, ծարիք, նախոր, ուռ-  
փայ, օպար, սափերիչ, հուսիրա, վախայ:

14. Ուտելիք եւ ըմպելիք. — Զեր, մա-  
նանայ, նաշին, տաքար:

15. Առանդին տնտեսութիւն. — ա) Ֆր-  
նային իրեր. — բազմակ, բուծին, դարգին,  
խարբալ, կասկարայ, կացին, մախար, տամ-  
փուր, օղբայ, սանի:

բ) Անեաններ. — Անկան, ապուղայ, կար-  
սայ, կաղայ, կրխայ, սկան:

տ) Տնտեսութիւն. — խմօր, խմեալ, ան-  
խուս:

16. Թիւ, չափ, կշիռ եւ դրամ. — Զու-  
ղայ, լումայ, խանքար, մարզպան:

17. Մետաղներ, հանքային նիւթեր եւ  
ամաններ. — բարչես, կուպր, ձանձախա-  
րիք, տափիւղայ, սափիրայ, սիդայ (կիր),  
սուր:

18. Ճամրի վերաբերեալ. — Կարկու-  
րայ, ղեկ, տալիք, պողոսայ, սեռն, տփայ:

19. Ժամանակ. — Դար, բերին, իլուլ,  
տաքար, տար, ուրբար:

20. Երկիր եւ պետութիւն. — ա) Երկիր  
մասեր. — Քորայ:

բ) Պետական կազմ եւ պաշտօնելութիւն. —  
Ազան, ամիրայ, աստրափզայ, ափիղասոս,  
մար, բարոյ:

տ) Կարչական զործարք. — Ախոր, զա-  
ղուր:

բ) Հարկեր. — Մախ:

տ) Պատերազմ. — Զիք:

շ) Զիներ. — Խարբ, շեղբ, սակուր,  
սուխ, սուսեր:

21. Սովորական կեանքի բառեր. —  
Աղք, բարել, գուր, դամարի, զոյտ, բան  
եւ բոն, խանձարուր, խորդ, ծրար, նար,  
յապանաս, նաբաղել, օփկար, սաբա, սնիկ  
(ակեֆ), սարմալ, ցամաք, փարատել, փեռե-  
կել, փրկել:

Հայերէնը ասորերէնից փոխ է առել  
նաև զանազան յատուկ անուններ որոնցից.  
Կարող ենք յիշել հետևեալները.

Արա, Արգար, Աբրահամ, Ահարոն, Ա-  
զան, Արօսմ, Բարեսալինայ (ասորական աս-  
տուածութիւն, որ ընդունուած էր նաև  
հայոց կրօնի մէջ), Գալիեոյ, Եզր, Եղիսէ,  
Նիկոր, Խահինակ, Հաբել, Մար, Մարուրա,  
Մուտք, Ցովաննես, Ցովինա, Ցովինան,  
Նաբար, Շամիրամ (որից Շամիրակերս),  
Շմաւոն, Շուփինաղիսոյ, Սարգիս:

ՊՐՈՖ. Հ. Ա.ՑՈՒ.ԽԵԱՆ  
(Հայունակել)